Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16400

361
f - 40

1877

2010

Arm. 493.
Arm. 493.
Compte-rendu de la Société Philanthropique de Bakou. Bakou 1877.
218

ՀԱՇԻՒ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատված Բագուի Մարդասիրական Ընկերութեան Խորհրդի ժողովի 1876 թ. համար:

ПЕЧАТЬ АЗІАТСКАГО МУЗЕУМА
SIG. MUS. ASIAT. C. A. 1819.

ԲԱԳՈՒ.

Մարդասիրական Ընկերութեան տպարան:

1877.

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР
5005
Museum Asiaticum. 493.
361
Բ-40

361
F-40

Дозволено Цензурою. Тифлисъ. 25 марта 1877 г.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИИ ИСКУССТВ
Академии Наук
СССР
2002

ՀԱՅԵՐԻ

Բարձրագոյն հաստատված բաղուխ Մարզասիրական Ընկերութեան խորհրդի ժողովի 1876 թ. համար։

Իրաքանչիւր միաբանական գործ կամ ազգային շինութիւն և կամ որպիսի և իցէ ընկերութիւն կարող է հասնել իւր նպատակին, եթէ նորա Անդամներ կամ Հոգաբարձուներ լինին միաբան, առողջամիտ, գործունեայ և անձնանուէր մարդիկ, ընդ հակառակն եթէ նոքա լինին անմիաբան, երկչոտ, փոքրոգի և անձնասէր չեն կարող ուղութեամբ, աներկիւղ ղեկավարի պէս, դէպի յառաջ տանել գործը և իւրեանց նպատակի ծայրին չհասած կթուլանան, կը ծուլանան և կիսաձանապարհում գործը թերի կը թողնեն և կիախչեն։ Մեր Մարդասիրական Ընկերութեան Անդամներ այդպէս չեն վարվել, այլ աշխատել են և աշխատումեն մինչև ցայսօր իւրանց կարողութեան չափով։ — Բայց այս Ընկերութիւնը, որպէս մի ազնիւ նպատակի համար կառուցած շինութիւնը, պահանջումէ և անշուշտ հարկաւոր է նորան պահպանել զարդարուն, մաքուր և օրէցօր հնանելու առաւել պայծառացնել, որ տեսնողներ և լսողներ փափագեն և ցանկան մուտ գործել այդ շինութեան մէջ և յաւիտեան չելանել և չհրաժարվել նորանից։

3 5 0 3 8 - 6

Եթէ մեր ազգի իւրաքանչիւր անհատից հարցնեն թէ Բաղուի Կայսերահաստատ Մարդասիրական ընկերութիւնը ի՞նչ օգուտ կարող է բերել ազգի համար, նա առանց մտածելու կվկայէ թէ «այդ ընկերութիւնը շատ մեծ օգուտներ է խոստանում ապագայ ժամանակի համար»։

Ընկերութիւնը կարող է ազատ իրագործել լուսաւորութիւնը Հայերի մէջ տարածելով և աղքատների ու անտանկների կարիքը լցուցանելով, երբ որ նորա անդամներ խղճի մօք կատարեն իւրանց պարտաւորութիւնը և երբ որ մեր ազգայիններն իւրանց գանձերից մի մասն նուիրեն այդ ընկերութեանը։ Այդպիսի խօսքերը, որոնք դեռ ևս ընկերութեան անդամ չեն գրված, բաւական մեծի մասին այնպիսի մարդիկ են, որոնք մարդասիրութեան և ազգասիրութեան պատուները ցոյց են տալիս իւրեանց լեզուի ծայրում, քանի որ բանը չէ հասել գրամական զոհաբերութեան, բայց երբ առաջարկուումն նոցա նուիրել ընկերութեան գանձանակին տակաւ ինչ գրամ, բաւ իւրեանց կարողութեան, այն ժամանակ լեզուները դադարում են և մի բան ևս չեն արտայայտում բաւ առաջնոյն յօգուտ ընկերութեան։

Մարդասիրական ընկերութիւնը ուրա տէրութեան հպատակ բոլոր Հայերի մէջ, իւր — երեքտասանեարդ տարվան գոյութեան մէջ, զանազան հնարներով, յարկերական նամակներով, տարեկան հաշուէհանդէսներով և շրջաբերականներով, կարողացել է գրանել մինչ 1877 թ. ապրիլը բացի հիմնադիրներից ընդամենը 157 — անդամներ և 105 տարեկան անդամներ։

ՄԱՍՆԻԿՅԱՆԻ Гос. Библиотека ZUUՌ-Арм. ССР Ա. Մասնիկյան անվան
36038-66
3

Անդամների այդ քանակությունը, համեմատելով բոլոր մեր ազգի բազմության հետ, տալիս է մի նուազ և սակայն միջոց նորա հոգաբարձուներին, որով նոքա կարողանում են միայն պահպանել նորան և չեն թողնում, որ նա քայքայվի և անհետանայ:

Մենք չենք պահանջում մեր ազգայիններից, որ նոքա բոլորովքեան անպատճառ մտնեն այս ընկերության հովանաւորության տակ: — Սակայն այն անձինք, որոնք կրում են իւրեանց վերա հայության անունը և գրվել են ընկերության անդամ, չբաւականանալով այն — դրամական ընծայաբերությամբ, որ նուիրել են ընկերության արկղին, կթնթևացնեն վերոյիշեալ հոգաբարձուների բեռը, եթէ իւրեանց համար անշուշտ պարտք համարեն միշտ խորհել և մտածել այդ ընկերության վերա, քննել նորա հաշիւները, բացայայտել իւրեանց ծանօթներին և բարեկամներին այդ ընկերության ազգօգուտ նպատակը և անդադար յորդորելով աղաչելով և խնդրելով, անդամների թիւը բազմացնել, ինչպէս անում են մի քանի գործունեայ անդամներ և ուրիշ զանազան քաղաքներում, որոնց պաշտելի անունները և բարեգործությունները ժամանակ ժամանակ հրատարակված են և անմոռանալի պիտի մնան ընկերության յիշատակարանում: Եթէ մեր ազգի հասկացողների մեջ մտքը լինէր ոչ լուսով միայն, այլ և հոգով ազգասէր, եթէ լաւ քննէր և մտածէր թէ ընկերությունը և ազգասիրությունը մի բնական ձիրք է, որ Աստուած պարգևել է մարդկային սեռին և մարդիկ պարտաւոր են

50539-ատ

այս Ճանապարհով պահպանել միութեան կապը, այն ժամանակ նոքա իւրեանց կեանքը ծննդեան օրից սկսած մինչև գերեզմանը պէտք է անցկացնէին այս անցաւոր աշխարհիս երեսին անձնազոհութեամբ և ընկերասիրութեամբ։

Ընկերութեան խորհրդական Անդամներ իւրեանց մտքի աչքերը վեր բարձրացրած դէպի նորա Լուսաւորչեան տիւզոսը, որ դրված է այս Ընկերութեան Ճակատին Մարդասիրական ոսկի տառերով, սեպուհ պարտք են համարել միշտ հոգալ մեր ազգայնների խաղաղի դրութեան վերա և իւրաքանչիւր տարի որպէս Աւետարանական անտեսներ մի սուրբ հայեացք պարձնելով մեր ընտանեկան անանցոյթ և աւելոծված կեանքի քարուքանդ եղած բարոյական աշխարհի վերա, մասամբ իւրք կարողացել են մեր շուրջ պատող և մեր միտքն ու հոգին ճնշող և գրաւող մոլութիւնների պատկերները երեան հանել իւրեանց տարեկան հաշիւների միջոցով, ցոյց տալով մի և նոյն ժամանակ այն միջոցները, որոնք կարող են արմատախիլ առնել այն մոլութիւնները, որ մեր ազգի գոնեա փոքրիկ մասը կորստաբեր հետևանքներից ազատել կարողանայ։ Ահա՛ մի դժուարին դէր, որն անդամներ յանձառու են եղել կատարել համարեայ բոլոր ազգութեան բարոյական կեանքի և մահի տեսարանի վերա։ Որպէս կատարեցին նոքա իւրեանց դերը և կարողացան արդեօք ծանօթացնել մեր ազգայնների փոքր ի շատէ հասկացող անդամներին թէ ինչով է մեր ազգը պակաս և ինչով լի։ այս մասին ժամանակը կարող է միայն

վիճակը։ մեզ մնում է դեռ ևս ասել թե բերան լռութեան մէջ սպասել մինչև մեր հայրենակիցներն կըսթափին և իրենց մութի աչքերի ճպռտոցը յուսնալով դէպ ի վեր կբարձրացնեն գլուխները և կտեսնեն որ մի և նոյն երկինքը կայ և մնում է յաւիտեան և այս երկնքի ներքոյ քանի հաղար տարի առաջ եղել է երբեմն մի ազգ, որի հետ նախախնամիչը ժամանակ ժամանակ պարապել է ինչպէս երբեմն պարապում էր Իսրայէլի որդիների հետ և այս ազգը այսօր թէպէտ սփռված է երկրային դունդի երեսով, սակայն սկսել է շունչ առնել և կենդանանալ, ժողովվելով մեր ամենողորմած և հայրախնամ ԿԱՑՍԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉԻ հովանաւորութեան ներքոյ։

Պ երևն ասացինք թէ չունինք իրաւունք մեր բոլոր հայ ազգից պահանջել որ մանէ նա ընկերութեան հովանաւորութեան ներքոյ թէպէտ կըրկնում ենք մանրով իսկ, ոչ մի ճշտակար բանով չպիտի պարապէր բացի լուսաւորութիւն տարածելուց, աղքատներն և անանկներն կերակրելուց, չքաւորների որդիների ուսումը բարձրագոյն ճեմարաններում կատարելագործելու համար դրամական միջոց գտնելուց և վերջապէս մեր ԿԱՑՍԻ համար հարգաց և հաւատարիմ հայեր պատրաստելուց։ Մենք կունենայինք իրաւունք այդ պահանջը առաջարկել, եթէ կարողացած լինէինք այս փոքրիկ շրջանում, այսինքն Բաղու քաղաքում, ներդծրծել հասարակութեան գոնեա մի քանի հարուստ հայերին։ Դեռ քաջ յայտնի է որ այս տարի քանի քանի հայերի

երեսին ծիծաղել է բաղդը և քանիսը սոցանից կարող են անդամակցել ոչ թէ մի քանի հարիւր ռուբ-լի ընծայելով ընկերութեան, այլ կարող ենք ասել, որ եթէ նոքա հազարներ ևս նուիրեն, կզգան այնքան ցաւ ու կսկիծ, որքան կզգայ մի փիղ ճանճի խայթոցից: Ուրեմն ակն յայտնի տեսնելով տեղիս հասարակութեան մի քանի նշանաւոր անձնների այդ աստիճան անտարբերութեան մէջ գոնվելը, կարող ենք արդեօք պահանջել որ և մեզ ևս քաղաքներում բնակող Հայերը անդամակցեն մեզ:

Հաւատացէք, բարեկամներ, որ այդպիսի անմխիթար պատկերներ հանդիսացնելով մեր ազգի կեանքից, մենք միայն չունէինք Ձեր ոչ մէկի սիրտը վիրաւորել, այլ որովհետև մեր ընկերութիւնը որքան շատ է տեսում, այնքան և նորա անունը հռչակվում է ամենայն տեղ, ըստ որում մեր ազգայիններ ցանկանում են տեսնել նորան ևս առաւել պայծառ ոչ թէ միայն անունով, այլ և գործունէութեամբ: Սկզբից ընկերութեան ամենագլխաւոր նպատակն է եղել տեղիս երկրեռ ուսումնարաններն պահպանել այնպիսի ուղղութեամբ, որ նոցա մէջ ուսանող օրիորդներ և տղաներ աւարտէին ուսումը և արձակվէին գիտութեամբ և հոգով զարգացած, սակայն դժբաղդաբար մեր այս նպատակին չհասանք: Ձէ անյայտ Ձեզ թէ հնար չմնաց որ գործ դրած էլինի ընկերութիւնը այս մասին, մինչև անգամ յուսահատված վոքր էր մնացել որ փակէր օրիորդական դպրոցը, որովհետև մեր դրամական միջոցները թոյլ

չէին տալիս ունենալ օրինաւոր վերատեսուչ և վարժապետներ։ Բայց խորհրդարան անդամներ մի և նոյն ժամանակ չկրնային և յոյսերն դրած Աստուծու վերա դիմեցին առ բարձր արժանապատիւ Խորէն Հայրիկ Ստեփանէ և խնդրեցին որ թողնէ իւր Շուշի քաղաքում ունեցած պաշտօնը, զայ Բագու և իւր վերատեսչութեան ներքոյ առնէ մեր երկեռ ուսումնարանները։ Խորէն Հայրիկն յարգելով անդամների խնդիրն ի պատիւ մեր ընկերութեան յայտնեց իւր գալու յօժարութիւնը։ Ուստի անդամները առանձին յայտարարութեամբ միջնորդեցին այս մասին ԱՌ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ մեր։ Նորին Օծութիւնը բարեհաճեց իւր օրհնութիւնաբեր կոնդակով հաստատել Խորէն Հայրիկին վերատեսչութեան պաշտօնում և իրաւունք տալ նորան գալ Բագու և բանալ առանձին կրթարան կամ պանսիօն։

Խորէն Հայրիկի անձնանուէր ազգասիրութեան, նորա բազմակողմանի քաջուսումնութեան և ուսումնարանական գործերում արդիւնաբեր վաստակների մասին խորհրդարան անդամները թէպէտ ի վաղուց հետէ լսած էին և միաբան ունէին հրաւիրել նորան Բագու, բայց որովհետև ընկերութեան դրամների տակոսները հազիւ հազ կարողանում էին պահպանել օրիորդական ուսումնարանը, ուստի չէին վստահանում դիմել առ նա, երկնչելով մի՛ գուցէ մեծ գումար պահանջէ ընկերութենից վերատեսչութեան պաշտօնի համար, սակայն Հայրիկն ցրեց բոլոր մեր կասկածանքն, իւր անձն, հոգին և գիտութիւնները զոհելով ընկերութեան առանց ակնկալութեան, ածա-

պարեց Բաղու և ահա արդէն մոռել է որպէս մի երկ-նառաք հովիւ իւր սիրելի ազգի որդիների բանաւոր այգու մէջ։ Մեզ մնում է այսուհետև ազօթել առ Աստուած, որ նա իւր աներևոյթ զօրութեամբ և հայրախնամ զթութեամբ պարգևէ ընկերութեան անդամներին և տեղիս մեր սիրելի հայրենակիցներին սէր, համբերութիւն, երկայնամտութիւն, խաղաղասիրութիւն, միաբանական հոգի, ընկերութիւն, ազգասիրութիւն և Աստուածասիրութիւն։ Եթէ այս երկնային շնորհները Աստուած պարգևեց մեզ, այն ժամանակ մենք կպատռնանք բարի մարդիկ և բարի քրիստոնեաներ. այն ժամանակ մեր հոգու աչքերն բացված լաւ կճանաչենք Հայրիկին, երախտագիտութեան և ոչ երախտամոռութեան պտուղ ցոյց կտանք նորան, կյարգենք նորան, կթեթևացնենք նորա դժուարակիր բեռները, նորան շուրջը պատած կխիրենք նորան որպէս մեր հոգևոր հօրը. ապա թէ կարող ենք յուսալ և տեսնել ապագայում մեր ցանկացած օրերն։ Խորէն Հայրիկի վերատեսչութեան պաշտօնում հաստատվելը խորհուրդը սահմանադրել է և առանձին օրագրութեամբ 24 նոյեմբերի 1876 թուի։

1876 թուականը իւր դանդաղ քայլերով մի ձեռին մանգաղ, իսկ միւս ձեռին ծաղկեայ փունջեր, մի կողմից հնձելով, իսկ միւս կողմից սերմանելով, մէկին բաղդ խոստացաւ, միւսին դժբաղդացրեց, մէկի քաղաքները լցրեց, միւսինը դատարկեց, մէկին բարձրացրեց որպէս լեռն, իսկ միւսին հաւասարեցրեց դեռնի հետ։ Մարդասիրական ընկերութեան խորհրդական անդամներ և բաղդախնդիր անձերի

շարքում սուլտան մի քանի ծաղկեայ փունջեր, որոնց անուշահոտութեանը այսօր կամենում ենք մասնակից առնել և ձեզ, որպէս ընկերութեան անդամներ. այդ հոտաւէտ փունջերն են մի քանի բարեսէր անձներ, որոնք իւրանց սուրբ ցանկութեամբ հանդիսացել են այս տարի դրամական նուիրատուութեամբ և մտել են ընկերութեան անդամների շարքում։

Երեսուն և մէկ տարի առաջ մի Ղարաբաղցի հայ համալ կամ բեռնակիր իւր ընկերակցների և հայրենակցների այնքան համարների հատարակութեան կողմից որպէս ճշմարտասէր և ուժեղ համալ ընտրվել էր կառավարիչ կամ գլուխ տեղիս հին հայկական քարվանսարում լինելով հայ վաճառականների բեռնակրութեան և զանազան մասնաւոր և միակութեան պաշտօնին ենթակայ յանձնարարութիւնները կատարելու համար։ Ցիշեալ համալն անունն էր Կարապետ Մերանցեան։ Այս բարեցիշատակ անձն, որպէս վկայումեն Բազուի հին վաճառականներ, վարում էր մի ճշգաւորի կեանք, ցերեկները դառն քրտինքը երեսին բեռներ կրելով, իսկ ամբողջ գիշերները քարվանսարի շուրջը պտտելով, որպէս պահանորդ, սարսռալը բերանում մրմնջելով։ Կապէկ կապէկ ժողոված դրամների տասանորդը բաժանում էր ծածկաբար աղքատների և տնանկների մէջ։ Սորա հարիւրաւոր մանէթները իւր միամտութեամբ առանց ապահովագրի յանձնված լինելով անխիղճ մարդիկներին կուլ էին գնում երբեմն և կորչում։ 1866 թուականին, երբ ընկերութեան անդամներ առաջարկում էին տեղիս հայերին, որ անդ-

դամ զրկին ընկերութեան և երբ դեռ Հայերը լաւ չէին հասկանում ընկերութեան նպատակը, Համալ Կարապետը ձեռին հարիւր ռուբլի մի փաթեթում պահած համեստ և խոնարհ դէմքով խնդրում էր անդամներին արժանի համարել նորան ընդունել ընկերութեան անդամների թւում: Աւելորդ է պատմել թէ որքան ուրախացան այն ժամանակ ընկերութեան զործակատար անդամները: Համալ Կարապետը միշտ պահքով և աղօթքով անցուցանելով իւր կեանքը աշխարհային վայելմունքից զրկված մինչև ցմահի օրը ամուրի մնաց, ապրելով աշխարհիս երեսում վաթսուն տարի: Համալ Կարապետը իւր մահից մի օր առաջ հրաւիրելով իւր մօտ ընկերութեան խորհրդական անդամներից Յակոբը Ալբրեսանին և Գրիգոր Թոմայեանին ասաց քահանայ տէր Թադէոս Բուդաղեանի հետ, որոնց ներկայութեամբ բերանացի կտակեց իւր բոլոր հարստութիւնը, որ բաղկանում էր 2,500 մանէթից զանազան բարեգործական նպատակի համար, որոնց թւում ընծայեց յօգուտ ընկերութեան օրիորդական ուսումնարանի հազար ռուբլի: Ինչ կերպ կատարվեցաւ լուսահոգի Համալ Կարապետի յուղարկաւորութեան և թաղման հանդէսը, ձեզ ամենքին արդէն յայտնի է: Տարօրինակ հանդէս և պատիւ էր, որ ցոյց տուեց ընկերութիւնը Համալի դիակը ցդնիզման հասցնելու. մինչև այն աստիճան, որ օտարազգիներ տեսնելով այս հանդէսը, զարմանում էին, երբ լսում էին որ մեռնողը Համալ է, մի ազգասէր Հայ և իւր կեանքը նուիրել է ի զոհ մարդկութեան և Աստուածասիրու-

թեան։ Մի երևոյթ ևս նշմարեցաւ 1876 թուականում խորհրդական անդամոց գործունէութեան հորիզոնում։ Տեղւոյս բնիկ քաղաքացիներից մի բարեպաշտ անձն Մարգար Ազատեան, որ քանի քանի դէպքերում ցոյց էր տուել բարեգործական ձեռքեր յօգուտ աղքատ ռուսանուղների, մի օր դիմելով խորհրդական անդամներին աղաչում է ընդունել ընկերութեան անփոխոխ անդամների թւում մատուցանելով միևնոյն ժամանակ անդամութեան հարիւր րուբլի վճարը, բացի տարանից ընծայելով և կրկին անգամ հարիւր րուբլի ի յիշատակ իւր հանգուցեալ որդու Յովսէփի, խնդրումէ գրել երկոցունց անունը ընկերութեան յիշատակարանում։ Մարգար Ազատեանը ոչ հարուստ մարդ է և ոչ ուսումնական անձը, բայց համեմատելով նորան այս երկու կարգի, մարդիկների հետ, նորան պէտք է հաշուել այն հազուագիւտ անհատների թւում, որոնք երբեմն մարդկային ազգի մէջ երևումեն, բայց շատ սակաւ։

Երրորդ երևոյթ ևս յայտնի եղաւ տարուս վերջերում։ Երկու եղբայրներ մատնաւոր վաճառականներ Ջաքարիայ և Ստեփան Թադէոսեաններ խոնարհամիտ անձինք նմանապէս անդրադէտ իւրեանց յօժար կամքով անցեալ դեկտեմբեր ամսին հրաբրումեն Տէր Թադէոս աւագ քահանայ Բուդաղեանին և յանձնելով նորան երկու հարիւր րուբլի խնդրումեն միջնորդել առ խորհրդական անդամներ, որ նոքա արժանի համարեն ընդունել նոցա ընկե-

բուն թեան անդամների թիւում յայտնելով թէ նոքա ի վաղուց հետէ ուխտել էին, որ եթէ Աստուած յաջողեց և բաղդը մի փոքր ծիծաղեց նոցա երեսին, անդադար նուիրել Ընկերութեան ոգեաւոր իւրեանց կարողութիւնը կներէ։

Զորրորդ երևոյթ վերոյիշեալ տէր Թադէոս աւագ քահանայն է, որ Ընկերութեան անփոփոխ անդամ է, և որի ընդունակութիւնները և արժանաւորութիւնները իւր արբազան պաշտօնում, ջանքը, հեռատեսութիւնը և գործակցութիւնը ընկերութեան վերաբերեալ գործերում, քաջ յայտնի է իւր հոգևոր իշխանութեան, նմանապէս և տեղուս հայ հասարակութեան։ Տէր Հայրը դեկտեմբերի 22ին Ներկայանալով խորհրդին, յայտնեց անդամներին թէ նա մտադիր է բոլոր իւր գերբաստանը հանդերձ եղբայրներով մասնակից առնել հետ զհետէ անդամակցութեան, ուստի իրրև սկիզբն և հաստատութիւն այս իւր նախանձելի մտադրութեան առաջարկեց հարիւր ռուբլի իւր հարազատ և բարեբարոյ եղբօր Եղիայ Բուդաղեանի անփոփոխ անդամութեան վճար, խոստանալով իւրաքանչիւր տարի եթէ Աստուած օգնեց, Ներկայանալ խորհրդին այդպիսի լինելուն զոհաբերութեամբ։

Սիրելի հանդիսականներ, ամենքին յայտնի է, որ այդ չորրորդ երևոյթը մեր քահանաների դասում մի նոր և տարօրինակ նշան է։ Այդպիսի անձնազոհութեան ընկերութիւնը արդարև կարող էր ապասել միմիայն տէր Թադէոսի պէս ազգասէր և հո-

գնեսէր հօրից, որի հոգայողութեան և հոգատարութեան ներքոյ շատ քաղցեալներ են կերակրվում այս քաղաքում. խորհրդական անդամներ պարտաւորված են արտայայտել Լուրեանց սրտի անկեղծ շնորհակալութեան զգացմունքը Տէր Թադէոս Հօրը։

Այժմ խորհրդական անդամներ յուրախութիւն սրտի սիրելիներիդ պարտաւոր են համարում յիշել 1876 թուում ընկերութեան շրջանը մտած անփոփոխ և տարեկան անդամների անունները և դրամական նուէրները։

ԱՆՓՈՓՈԽՆԵՐ։

		Դրամ.
1.	Գանձակի Յովհաննէս քահանայ Տէր Զաքարեան . . .	100
2.	Պարոն Ստեփան Տէր Օհանեան. .	100
3.	Շամախու գաւառի վանք գիւղի Յովհաննէս Իւզբաշեան . . .	100
4.	Մի անակնկալ և անյիշատակելի աղբիւրից աշխատութեամբ բարեսէր անձնների խորհրդական անդամներ տացան . .	300
5.	Լուսահոգի համալ Կարապետ Մելքանցեանի կտակագրով ընկեր. ընծայած	1000
6.	Բաղուաբնակ Մարգար Ազատեան .	100
7.	Նոյն ևս ի յիշատակ իւր լուսահոգի որդու Յովսէփի Ազատեանի . . .	100
8.	Շամախու բնակիչ երկու եղբայրներ Զաքարիա և Ստեփան Թաթոսեաններ .	200
9.	Եղիայ Բուդաղեան . . .	100

10. Համախաբնակ Պօղոսեան Վասիլ . 100
11. Բազուաբնակ Յարութիւն Շահնազարեան 100
12. Շուշվաբնակ Աղաջան Ունանեան . 100
13. Բազուաբնակ Աղա Եղիազարեան . 100
14. Գրիգոր Միրզա-Աւագեան . . 100

Ընդամենն է . 2,600 ր.

ՏԱՐԵԿԱՆՆԵՐ։

		ռուբ.
1.	Պօլիկարպիկ Շօլիկարպիկեան . . .	5
2.	Վահան Վարդապետ Բաստամեան .	5
3.	Խորէն քահանայ Միրզաբէկեան . .	5
4.	Աղնախեցի Մելքոյ Թաթոսեան . .	5
5.	Յարութիւն Սիմոնեան. . . .	5
6.	Տիգրան Տիգրանեան	5
7.	Արտէմ Օթարեան	5
8.	Օդէսա բնակող Յովսէփ Վասակեան .	5
9.	Յովհաննէս Շահպարոնեան . . .	5
10.	Վերին Աղուլիսեցի Սարգիս Բաղդեան .	5
11.	Վերին ,, Դաւիթ Փանեան .	5
12.	Շուշվաբնակ Յովհաննէս Տէր Յակոբեան	5
13.	Գասպար Մելիք-Բաղդասարեան . .	5
14.	Բազուաբնակ Աստիճանաւոր Աղէքսանդր Սերգէյեան	5
15.	Աստիճանաւոր Եփրեմ Ենգիբարեան .	5
16.	Գերազնիւ Զոհրաբ Խանկալամեան. .	5
17.	Երին կողակից Տիկին Ե. Խանկալամեան.	5

ԲԱԳՈՒԱԲՆԱԿՆԵՐ։

18. Խորէն Վարդապետ Ստեփանէ . . 5
19. Կարապետ Քոչարեան 5
20. Գէորգ Վարդանեան 5
21. Գէորգ Շահնազարեան . . . 5
22. Յովհաննէս Սերգէյեան . . . 5
23. Գէորգ Քիւրքչեան 5
24. Աստիճանաւոր Համբարձում Խզբաշեան 5
25. Յակոբ Փիրզատեան 5
26. Յովհաննէս Շահնազարեան . . . 5
27. Աստիճանաւոր Անաստաս Տէր-Առաքելեան 5
28. Խաչատուր Սերգէյեան . . . 5
29. Դաւիթ-բէկ Խզբաշեան . . . 5
30. Զաքարեայ Ասլանեան . . . 5
31. Յարութիւն Թալաքալեան . . . 5
32. Եղիայ Պարոնովեան 5
33. Յարութիւն Մելիքեան . . . 5
34. Զաւան Բաղդասարեան . . . 5
35. Աղաբէկ Տէր Յովհաննէսեան . . 5
36. Սահակ Դասաշեան 5
37. Աղէքսանդր Սափարեան . . . 5
38. Աղէքսանդր Շանշեան . . . 5
39. Յարութիւն Պօղոսեան . . . 5
40. Սիմէոն Թաթոսեան 5
41. Աղէքսանդր Ամիրխանեան . . . 5
42. Աւետիս Տէր Գրիգորեան . . . 5
43. Յակոբ Օրբէլեան 5
44. Գրիգոր Եղիշանեան 5

45. Գրիգոր ՃՁՆԱՒՈՐԵԱՆ . . , . 5
46. Ասաղ Գրիգորեան 5
47. Սարգիս ՏԷՐ-Սարտիրոսեան . . 5

ԸՆԴԱՄԵՆՆ Է . 235 Ր.

Վերոյիշեալ նուիրատուութիւնների թւում խորհրդական անդամներ չեն կարող մոռանալ և չյիշել այստեղ, որ ընկերութեան ազնուաբարոյ և ազգասէր անխոնջ անդամ ատենադպիր Սարգիս Խաղբաշեանն առանձին զրութեամբ նուիրել է օրիորդական ուսումնարանին ,,Փորձ" ամսագիրը, որ շարունակ ստանում է այդ դպրոցը։

Խորհրդական Անդամներ երեխաստաբերտ են դոնեվաճ Սարդասիրական ընկերութեան բոլոր անդամների կողմից յայտնել խրատց մտերմութիւնը և խորին շնորհակալութիւնը վերոյանուանված նորատպակ և բարեսէր անդամներին։

Մեծ ուրախութիւն և բաղդ պիտի համարած ընկերութեան համար, երբ մեր սիրելի ազգի որդիների մէջ հանդիսանում են խրատչներ տարի այդպիսի բարեսիրտ և բարենիստ Հայեր, դոցա անձնանուէր զոհաբերութիւնների պտուղները վայելեն, վայելում են և պիտի վայելեն յետ այսորիկ ուսման ծարաւի աղքատ Հայերի որդիները, դոցա պաշտելի անունները դրվելով ոսկեմած և մարդասէր անձների շարքում, ամենայն ժամ պէտք է անմոռանալի մնան ազգասէր մարդիկների յիշողութեան մէջ։

Խորհրդական անդամներ պարտաւորված են նամա-

նապէս ի տեղեկութիւն սիրելիներիդ առաջի առնել մեր բազմաշխատ անխոնջ անդամ Ներսէս տէր Ներսէսեանից ուղարկած գանձակի տնօրէն մասնաժողովի Մարդասիրական Ընկերութեան տարեկան հաշիւը, որից երևումէ թէ ստացված է 1876 թուի ընթացքում գանձակում և նորա գաւառում գտնվող տարեկան անդամներից արժանապատիւ հայրերից: 1-ն Գրիգոր քահանայ Բաբաքեխանից, 2, Դանիէլ քահանայ Տէր-Բարղամեանից, 3, Աստուածատուր Վարդապետ Տէր-Յարութիւնեանից և պ. պ. 4, Յովհաննէս Փաթալեանից 5, Կարապետ Փաթաչեանից, 6, Կարապետ Տէր-Ներսէսեանից, 7, Մանուէլ Ամիրխանեանից, 8, Գաբրիէլ Հախվերդեանից 9, Աւագ Մելիք-Թոսամեանից, 10, Պետրոս Մանուէլեանից, 11, Եփրեմ Եպիսկոպոսեանից, 12, Մովսէս Եպիսկոպոսեանից, 13, Թոսամ Յովհաննէսեանից, 14, Սմբատ Շիրակունուց, 15, Գրիգոր Վարդազարեանից, 16, Սղոմոն Երեցփոխեանից, 17, Դաբրամն Յովհաննէսեանից, 18, Մկրտիչ Դալէչեանից, 19, Մէջլում-բէկ Շահնազարեանից, 20, Սէրգէյ Դալումեանից, 21, Մինաս Իզբաշեանից, 22, Գրիգոր Յէր-Պետրոսեանից, 23, Պետրոս Եղիազարեանից, 24, Գրիգոր-Մահտեսի Մկրտումեանից, 25 Աբրահամ Մելիքեանից, 26, Վարդազար Բռակալեանից, 27, Յարութիւն Մարտիրոսեանից Խաչակապցի, 28, Յովհաննէս Ոսկանեանից, 29, Յարութիւն Աբեանից 30, Արշակ մահտեսի Յովսէփեանից, 31, Խաչատուր Յականեանից, 32, Կոնստանդին Մելիքեանից, 33

БИБЛИОТЕКА ЕГИПТОЛОГИЧЕСКОЙ Научн

ւեոթք Նասիբեանից, 34, Սողոմոն Աբրամեանից, 35, Աղէքսանդր Ղուկասեանից և 36, Տիկին Մարիամ Ղուկասեանից, ընդամէնն երեսուն և վեց անձներից իւրաքանչիւրից հնգական ռուբլի, տարեկան վճար ստացվեցաւ 1876 թուի համար մէկ հարիւր ութսուն ռուբլի . . . . 180 ր.

2. Բարեկրօն Գրիգոր քահանայ Թումայեանը և Մեծապատիւ Եղոր Յովհաննէսեանը տարեկան անդամակցութեան վճարը 1876 թուի, փոխանակ հնգական ռուբլու վճարեցին տասնական ռուբլի, ընդամէնն քսան ռուբլի . . . . 20 ր.

3. Վերոյիշեալ գումարից մի մասը տրվեցաւ տոկոսով և ստացաւ հինգ ռուբլի . . 5 ր.

4. 1876 թուի ընթացքում գրվեցան նոր անդամներ ընկերութեան: 1, Գրիգոր-Տէր Մելիքսէթեան Շուլավերցի, 2, Աղէքսանդր Յովհաննէսեան Գանձակեցի ուսուցիչ, 3, Սերգէյ Աթայեան Գանձակեցի, 4, Յովհաննէս Սաղաթէլեան, 5, Բարեկրօն Տէր Մկրտիչ Տէր Յարութիւնեան, միաբան Ս. Յովհաննէս Եկեղեցու Գանձակի, 6, Միրզա Թավաքալեան Փիրեցի և 8, Գրիգոր Սաղաթելեան Սղնախեցի, որոնց տարեկան վճարն է հնգական ռուբլիով քառասուն ռուբլի . . . . . 40 ր.

5. 27-ն Դեկտեմբերի 1876 թուին Տնօրէն մասնաժողովը ունեցաւ նիստ Ներսէս Տէր-Ներսէսեանի տանը իւր հաշիւներին վերահասողութիւն անելու նպատակով: Այս նիստին ներկայացան և գրվեցան տարեկան անդամներ ներքոյ յիշեալ անձները, ցանկութիւն յայտնելով, որ նոքա ընդունվին անդամ

1877 թուականի սկզբից։ 1, Էջմիածնի Լուսաւորչեան Մինոցի անդամ Գերապատիւ Գրիգոր Եպիսկոպոսն Մուշեղեան, 2, Բարձրապատիւ Սեբէոսնոս Վարդապետ Մխիթարեան միաբան սուրբ Էջմիածնի, 3, Շուշեցի վաճառական Աւետիք Թարումեան, 4 Գետաշէն գիւղի ծխական քահանայ Սիմէոն Ադիբէկեան։ 5, Գանձակի լուսաւորիչ եկեղեցու միաբան Տէր Գրիգոր Տէր Մակարեան։ 6, Շուշեցի կալուածատէր Խաչատուր-բէկ Մելքոնեան, 7, Գանձակեցի վաճառականներ, Աղէքսանդր Սահակեան, 8, Մարտիրոս տիրացու Յովհաննէսեան։ 9, Իվան մահտեսի Յովհաննէսեան։ 10, Աղա մահտեսի Առուշանեան։ 11, Աւետիք Ղաբուղեան և 12, Տիկին Հռիփսիմէ Հախվերդեան, ընդ ամենն տասն երկու անձներ վճարեցին վաթսուն բուբլի 60 ր.

ընդամենն է . 305 ր.

Ծ Ա Խ Ս։

. Համաձայն վճռահատութեան ընկերութեան մայիսի 19-ն 1875 թուի №115, Ղարաչինալցի որբ Նիկողայոս Տէր Սողոմոնեան ընդունված է որդեգիրների շարքում ընկերութեան երկու տարի ժամանակով, որի ապրուստի համար տարին 50 ր. է նշանակած։

Այս հաշվումն վճարված է Գանձակեցի Սարգիս Արզումանեանին Ն. Տէր Ներսէսեանի ձեռով տասն տմի վարձ քառասուն բուբ. 40 ր.

2. Երբեմն տաճիկ, այժմ քրիստոնեայ Մկրտիչ Մարդասիրեանին, որն նոյնպէս ընդունված էր ընկերութեան որդեգիրների հաշվում և ուսանումէր Հայկական լեզուն և կրօնը վանական դպրոցում Ս. Թարգմանիչների վանքում, վճարվեցաւ ծախս վեց ամսի ապրուստի համար յունվարի 1 մինչև ցմեկն յուլիսի 1876 թուին, քսան և չորս ռուբ. դաղարեցներով այն օրից որ և եկէ նպաստ տալը նորան ընկերութեան գանձարանից:

3. 1876 թվի ընթացքում ի նպաստ քաղաքիս չքաւորների և տնանկների Ն. Ներսէսեանի ձեռով տաւած է ութ ռուբլի ութսուն կոպ. 8 ր. 80կ.

4. Ի նպաստ գիւղական դպրոցների գանձակի գաւառի տեսուչ մեծապատիւ Մովսէս Եպիսկոպոսեանի ձեռով բաժանեցաւ գրքեր Բանանցին 30 ր. Գետաշէնին 30 ր. և Բիլին 50 ռուբլի, ընդամենն մէկ հարիւր տասը ռուբլի, որպէս զի այս գրքերը, իբրև սեպհականութիւն յիշեալ գիւղական դպրոցների տրվին նորեկ աշակերտներին (չքաւորներին) և տացվին, երբ նոքա աւարտեն ուսումն կամ թողնելու լինին դպրոց 110ր.

5. Խաչակապ գիւղի օրիորդական դպրոցի վարժապետ կարապետ Մելիքեանին, իբրև մասնաւոր վարձատրութիւն ընծայված է տասն և հինգ ռուբլի, որովհետև նա ձրիապէս էր սովորեցնում մայրենի լեզուն օրիորդական դպրոցում 20ի չափ աշակերտուհիներին: 15 ր.

6. Յոգուտ ծխական դպրոցների գանձակ քաղաք

քի նոյն դպրոցի հոգաբարձութեան ձեռով յանձնվեցաւ մէկ հարիւր ռուբլի, որով ի պէտս չքաւոր ուսանողների պատրաստվեցան հարկաւոր ուսանողական պիտոյքներ 100ր.

7. Դիվանական ծախս Ն. Տէր Ներսէսեանի գրաւոր յարաբերութիւնների մասին, ընկերութեան գործերի վերաբերութեամբ թղթակցութեան և ուրիշ տեղեր, 1876 թ. ընթացքում երկու ր. քսան կ. 2ր. 20 կ.

Ընդամենն է . 300 ր.

Ա. 1-ն յունվարի 1877 ամի մնացորդ . . 5 ր.

Հաւասարութիւն 305 ր.

Զէ անյայտ Ձեզ, որ խորհրդական անդամների պաշտօնակատարութեան գլխաւոր պարտքը պիտի համարած ընկերապատկան գրամների կանոնով և խնայողութեամբ գործածելը։

Ընդհանուր ժողովը յունվարի 25 1876 ամի առանձին նախահաշիվով հաստատել էր գործ ածել մանրամասն նշանակած զանազան բարեգործական դիպուածների վերայ, նոյն թուականի ընթացքում 2,500 ռուբլի։

Յետագայ գրամահաշիւը ցոյց կտայ թէ որպիսի առարկաների վերայ է ծախս արած վերոյիշվածգումարը, ցոյց տալով և բոլոր տարեկան եկամուտը։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՊ-Арм.ССР
Ա. Կմ. А. Мясникяна
ՍԵՄԱՆԻՀԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ
36038-66

Հ Ա Շ Ի Ւ

Մարդասիրական Ընկերութեան յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի 1876 թուի համար։

ՄՈՒՏՔ.

1.	Առ 1 յունվարի 1876 թ. մնումէր ընկերապատկան զուտ գումար	11337 40	
	Խաղարկական տոմսակներ 5% 45 հատ (104. 50)	4702 50	
			16039 90
	1876 թ. ընթացքում յօգուտ Ընկերութեան ստացված են.		
2.	Ընկերապատկան գումարներից այն է 11, 337 ր. 40 կոպեկից և 45 հատ 5% տոմսակներից տոկոսիք ստացաւ	— —	1837 45
3.	107 տարեկան Անդամներից Բագուի եւ ուրիշ քաղաքների մէջ	537 —	
4.	13 Անփոփոխ Անդամներից Բագու և ուրիշ քաղաքների մէջ գտնված	1300 —	1837 —
5.	Ընկերապատկան շինութեան ներքնայարկից .	— —	73 10
6.	Ընծայաբերութիւն օրինաւոր կտակով հանգուցեալ մշակ Կարապետ Միրանցեանից .	1000 —	
7.	Միջնորդութեամբ բարերար անձների յօգուտ ընկերութեան պարոն Ներսէս Կրասիլնիկեանից	300 —	1300 —
8.	Աշակերտուհիների ձեռագործների յօգուտ ընկ. վիճակահանութենից	— —	141 —
9.	Բագուի փոխադարձ կրեդիտի դրամանոցում յօգուտ Ընկ. նշանակված գանձանակով ժողովված	— —	55 —
10.	Տպարանի վաճառված անգործածաղրելի տառերից	— —	88 23
11.	Ընկերապատկան թատրոնական զգեստներից ստացաւ Դէրբէնտից 10 ր., որից դուրս գալով փոստի ծախք 3 ր. մնաց յօգուտ Ընկերութ.	— —	7 —
12.	Ընկերապ. Տպարանից մնաւ տարեկան օգուտ	— —	217 47
	Գումարն է .		21,596 15

Ծանօթ. 18 երեսում, որ տպագրական սխալմամբ դուրս ընկած է 7-րդ համարը, պիտի լինի Բէղլար Խոջայեան Փիրեցի։

ԵԼՔ։

	1876 թուի ընթացքում յետագայ ծախքերն եղան։		
1.	Լրագիրների համար ուղարկվեցաւ . . .	— —	20 —
2.	Ընկերապ. շինութեան կարկատանքի համար	— —	151 30
3.	Որդեգիրներին, որոնք ուսանումեն Բագուի եւ ուրիշ քաղաքների մէջ.		
	ա. Թիֆլիսի գիմնազիօնում Սարգիս Ծատուրեանին	120 —	
	բ. Մոսկվա տեխնիքական ուսումնարանում Սարգիս Մեհրաբեանին.	121 44	
	գ. Եւս Ներսէս Աբէլեանին	100 —	
	դ. Բագուի գիմնազիօնում ուսանող աղքատ աշակերտներին	110 —	
	ե. Խանջղեանին եւ Աբէլեանին ճանա. ծախս	120 —	
4.	Օրիորդակ. ուսումնարանի վարժապետների վարձ	605 20	571 44
5.	Ուսումնարանի պահապանին	72 —	
6.	Ուսումնարանի համար վառելափայտի . .	39 36	
7.	Օրիորդական ուսումն. ծեռագործի համար զանազան իրեղէններ	59 94	776 50
8.	Այլի կնոջ գերդաս. համար սահմանված վարձն	— —	120 —
9.	Քիլվարու ուսում. համար սահմանվածն ուղարկ.	— —	250 —
10.	Տպարանի համար գնվեցաւ հարկաւոր տառեր ռուս.	— —	331 52
11.	Ընկերապ. խաղար. տոմսակ. ապահովացնելու հմր.	16 20	
12.	Գործաւորական դիվանական ծախսն . .	83 4	99 24
13.	Գանձակում պ. Ներսէս Տէր Ներսէսեանի միջնորդութեամբ զանազան բարեգործ. նպատակով ծախք է եղած ժողովի խորհրդի վճռահատութեամբ.	— —	300 —
	Ընդ ամենը	— —	2620 —
	Վերոյիշված գումարն հանելով մուտքից մնաց առ 1-ն յունվարի 1877 թ. զուտ գումար	14273 65	
	Խաղարկական տոմսակներ	4702 50	18976 15
	Գումարն է	— —	21596 15

Ընդամ. Գրագրագիր Ս. Վարշամեան։

34 44

2013